



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 155 Ք 113 » 08 09 2017 թ.

2016թ. ԱՊՐԻԼԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՊՀ ՌԵԿՏՐԻ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016թ. սեպտեմբերի 1-ի թիվ 01/06-2/10525-16, 2017թ. փետրվարի 7-ի թիվ 01/06.2/1493-17 և 2017թ. սեպտեմբերի 4-ի թիվ 01/06.2/11904-17 նամակներով կատարված առաջարկությունը՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

### հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցած լայնածավալ մարտական գործողություններին մասնակցած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված Երևանի պետական համալսարանի ուսանողներին, զինվորական գրքույկներում համապատասխան նշման առկայության դեպքում մինչև ուսումնառության ավարտը, առանց ՄՈԳ-ի շեմը հաշվի առնելու տալ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տարեկան սահմանված ուսման վարձավճարի 50 տոկոսի չափով:

2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 2017թ. օգոստոսի 29-ի թիվ 147Տ46 հրամանը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ-ի սովորողներին և կառուցվածքային ստորաբաժանումներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՐ

Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆ